ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ստանդարտացման մասին» 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-21-Ն օրենքի այսուհետ՝ Օրենք 2-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել։
- Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել նոր 9.1 ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«**9.1) հիմնադրական ազգային ստանդարտ՝** ստանդարտացման ազգային մարմնի կողմից մշակված և հաստատված ազգային ստանդարտ, որով սահմանվում են ստանդարտացման աշխատանքներին վերաբերվող ընդհանուր դրույթներ, ինչպես նաև ազգային ստանդարտներ տեսակները.»

Հոդված 2. 1-ին մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«**10) տեխնիկական պայմաններ՝** կազմակերպության ստանդարտի տեսակ, որով սահմանվում են տեխնիկական պահանջներ որոշակի արտադրանքի, աշխատանքի (գործընթացի), ծառայությունների նկատմամբ.»

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի

1) 1-ին մասի 13-րդ կետում «պետություն» բառը փոխարինել «կառավարություն» բառով.

2) 1-ին մասի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**16) պետական ստանդարտացման ամենամյա ծրագիր՝** ծրագիր, որը մշակվում է պետական կառավարման մարմինների առաջարկությունների հիման վրա, հաստատվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով և ենթակա է պետական ֆինանսավորման.»

3) 1-ին մասի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) ստանդարտացման ամենամյա ծրագիր՝ ծրագիր, որը մշակվում է Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կողմից ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմերի առաջարկությունների հիման վրա՝ ելնելով տնտեսության զարգացման, տնտեսության մեջ միջազգային նորարարական գիտելիքի և փորձի ներդրման անհրաժեշտությունից և առկա կարիքներից։»

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «ծառայությունների որակի» բառերից հետո լրացնել «, հայկական արտադրանքի մրցունակության,» բառերը:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 6-րդ կետում «միջազգային (այդ թվում՝ եվրոպական)» բառերը փոխարինել «և տարածաշրջանային» բառերով:
- 8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«8) գործողության մեջ դրված ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների հրապարակում ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի պաշտոնական էլեկտրոնային կայքում և պատշաճ ծանուցում բոլոր շահագրգիռ կողմերին.»

- 9-րդ կետում «տեխնիկական հանձնաժողովների» բառերից հետո լրացնել «դրանց բացակայության դեպքում աշխատանքային խմբերի» բառերը:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքով» բառից հետո լրացնել «հիմնադրական ազգային ստանդարտներով» բառերը։

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «կիրառվում են» բառից հետո լրացնել «միջազգային» բառը։

Հոդված 8.Օրենքի 8-րդ հովածի 1-ին մասում

1) **«**Ստանդարտացման ազգային մարմինը» բառերը լրացնել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը» բառերով,

2) «մարմինը» բառից հետո հանել «տեխնիկական» բառը,

3) «հանձնաժողովները» բառից հետո լրացնել «կամ աշխատանքային խմբերը» բառերը։

Հոդված 9. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչել։

1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) մշակում, իրականացնում և համակարգում է ստանդարտացման ոլորտում պետական քաղաքականությունը.»

1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ստանդարտների մշակման ծառայությունների պետական ծրագիրը, ստանդարտացման աշխատանքների ցանկը, .»

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածի վերնագրում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել և չափագիտության ազգային մարմինը» բառերը։

1) 1-ին մասում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառը.

2) 2-րդ մասում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառը.

3) 2-րդ մասի 1-ին կետում «ստանդարտները.» բառից հետո լրացնել «փոփոխությունները, ուղղումները.»

4) 5-րդ կետում «ստեղծում» բառից հետո լրացնել « , վերակազմակերպում և լուծարում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր,» բառերը։

5) 2-րդ մասի 8-րդ կետում «և վարում» բառը փոխարինել « , վարում և արդիականացնում» բառերով։

6) 2-րդ մասի 15-րդ կետում «համակարգող» բառը փոխարինել «և/կամ համակարգող» բառերով։

Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) «1. Կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կառավարման մարմինն է, որը կազմված է 9 անդամներից՝ ստանդարտացման և չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող 5 անձանցից և ոչ պետական կազմակերպությունների 4 ներկայացուցիչներից։»

2) 3-րդ մասում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառը։

3) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ։ Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար՝ առցանց ռեժիմով։ Հեռավար նիստերի ժամանակ քվեարկությունը կատարվում է էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով։ Նիստին ներկա անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է։»

4) 8-րդ մասի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ կետերում «ստանդարտացման» բառից

հետո ավելացնել «և չափագիտության» բառերը։

«Ստանդարտացման» բառից հետո ավելացնել «և չափագիտության» բառերը

5) 8-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2) հաստատում է Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը.»

6) 8-րդ մասի 3-րդ կետը ուժը կորցրած ճամաչել։

7) 8-րդ մասի 5-րդ կետում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառը։

8) 8-րդ մասի 6-րդ կետում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառը։

9) 8-րդ մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) սահմանում է ստանդարտացման և չափագիտության բնագավառում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային զարգացման ուղղությունները և առաջարկություններ է ներկայացնում ստանդարտացման լիազոր մարմնին՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո.»

10) 8-րդ մասի 8-րդ կետում «ընդունում է» բառը փախարինել «ձևավորում է» բառով։

11) 8-րդ մասի 9-րդ կետում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառը։

12) 8-րդ մասի 10-րդ կետում «հանձնաժողովների» բառից հետո լրացնել «աշխատանքային խմբերի» բառերը։

13) 8-րդ մասի 11-րդ կետում «հանձնաժողովներին» բառից հետո լրացնել «աշխատանքային խմբերին» բառերը։

14) 8-րդ մասի 12-րդ կետի բովանդակությունը լրացնել Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի նոր 18-րդ կետով։

15) 8-րդ մասի 13-րդ կետում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառը։

Հոդված 12.Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «տեխնիկական հանձնաժողովներն» բառերից հետո լրացնել «աշխատանքային խմբերը» բառերը։

2) 1-ին մասում «Սատնդարտացման» բառից հետո ավելացնել «և չափագիտության» բառերը։

3) 2-րդ մասի 4-րդ կետում «ձևավորմանը» բառից հետո լրացնել «և ներկայացնում է առաջարկություններ» բառերը։

Հոդված 13. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը ուժը կորցրած ճանաչել։

Օրենքի 13-րդ հոդվածի՝

1-ին մասի 6-րդ կետում «կազմակերպության ստանդարտները» բառերից հետո լրացնել «, և տեխնիկական պայմանները.» բառերը։

Հոդված 14. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասից հանել «ինչպես նաև դասակարգման օբյեկտների և դրանց ենթաբազմության կոդերի ու անվանումների հաբաքածուներ» բառերը։

2) 4-րդ մասից հանել «հավանության և վերահիրատարակման» բառերը։

Հոդված 15.Օրենքի 15.1.-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 16.Օրենքը լրացնել նոր 15-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.Ռազմական ազգային ստանդարտների համար կիրառվում է «Հայաստանի ռազմական ազգային ստանդարտ» անվանումը և «ՀՍՏ Ռ» դասիչը։»

Հոդված 17. Օրենքի 15.2 հոդվածի 1-ին մասում «ընդունում» բառը փոխարինել «հաստատում» բառով։

Հոդված 18. Օրենքը լրացնել նոր 15.3 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 15.3 Տեխնիկական պայմաններ

1. Տեխնիկական պայմանները մշակում, հաստատում, դրանցում փոփոխություններ կատարում, չեղյալ են հայտարարում իրավաբանական անձինք և (կամ) անհատ ձեռնարկատերերը։ Տեխնիկական պայմանները և դրանց փոփոխությունները ենթակա են փաստաթղթային փորձաքննության և հաշվառման Ստանդարտացման ազգային մարմնում՝ համաձայն գործող ստանդարտացման կանոնների և ուղեցույցերի։ Նախքան փաստաթղթային

փորձաքննություն կատարելը, ելնելով անհրաժեշտությունից, հայտատուն ներկայացնում է նաև համապատասխան պետական մարմնի կամ ոլորտային կազմակերպության եզրակացությունը (համաձայնեցումը)։

2. Տեխնիկական պայմանները չպետք է հակասեն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին։
3. Մինչև համապատասխան տարածաշրջանային կամ ազգային ստանդարտների ընդունումը կազմակերպությունների տեխնիկական պայմանները ենթակա են փորձաքննության և հաշվառման Ստանդարտացման ազգային մարմնում՝ համաձայն գործող

ստանդարտացման կանոնների և ուղեցույցների։»

Հոդված 19. Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «կանոնակարգերով» բառից հետո լրացնել «կամ նորմատիվ իրավական ակտերով» բառերը։

Հոդված 20. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում «Ստանդարտացման» բառից հետո լրացնել «և չափագիտության» բառերը, իսկ «ստանդարտացման տեխնիկական» բառերը փոխարինել «կառավարման» բառերով։

Հոդված 21. Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «դասակարգիչներ» բառերը։

Հոդված 22 Օրենքի 19-րդ հոդվածի

1. 1-ին մասի 3-րդ կետում «մուծումը.» բառը փոխարինել «վճարումը.» բառով

2. 1-ին մասի 5-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

3.2-րդ մասի 3-րդ կետում «սերտիֆիկացումից» բառը փոխարինել «համապատասխանության գնահատումից» բառով:

Հոդված 23. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 24. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: